ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **8 մայիսի 2025թ.**

2025թ-ի մայիսի 8-ին ժամը 10:00-ին ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝	Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար,
Ա. Բաղրամյան՝	Հիմնադրամի գլխավոր հաշվապահ,
Ն. Շահնազարյան՝	Հիմնադրամի ավագ հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2025թ-ի ապրիլի 3-ի № 2 արձանագրությամբ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները անվավեր ճանաչելու մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2025Թ-Ի ԱՊՐԻԼԻ 3-Ի № 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ ընթացակարգի շրջանակում Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայցադիմումի վերաբերյալ կայացված վճռի մասին՝ համաձայն որի վճռվել է «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի՝ թիվ «ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել և անվավեր ճանաչել թիվ «ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայցադիմումի վերաբերյալ կայացված վճռի մասին, և հաստատել ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համակարգի կողմից գեներացված հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Բաղրամյան _____

Ն. Շահնազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան _____